

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտներ.....	10
5.2. Բյուջեի ծախսեր.....	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռ.....	13
5.4. Պետական պարտք.....	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ.....	15
6.2. Ավանդներ և վարկեր.....	16
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	18
8. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության անկման միտումը, որի տեմպը շարունակաբար խորանում էր 2020թ. ապրիլ ամսից, այդպես էլ պահպանվեց մինչև տարեվերջ, իսկ տնտեսական վերականգնման նախադրյալները դեռևս տեսանելի չեն: 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին մի շարք բացասական շուկերի ազդեցությունների և դրանց դիմակայման համար անհրաժեշտ քաղաքականության բացակայության պայմաններում, գրանցվել է բավականին խոր՝ 7.5% տնտեսական ակտիվության անկում:

Տնտեսական ակտիվության տասներկուամսյա անկման ցուցանիշները (ամսվա տնտեսական ակտիվությունը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) տարվա ընթացքում ունեցել են երեք անկման խորացման կետեր՝ ապրիլին (ամբողջական սահմանափակումների ներդրմամբ պայմանավորված), հուլիսին (կորոնավիրուսի առաջին ալիքի գագաթնակետով պայմանավորված) և նոյեմբերին (Արցախյան պատերազմով պայմանավորված), որոնցից հետո անկման տեմպը սկսել է որոշ չափով դանդաղել: Սակայն, մնացած ամիսներին նույնպես եղել է բավական խոր տնտեսական անկում. ապրիլից դեկտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության 12-ամսյա անկման տեմպը միջին հաշվով եղել է ավելի քան 10%:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Դեկտեմբերի հրապարակմամբ, վերանայվել են նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում հունվար-հոկտեմբեր և հունվար-նոյեմբեր ամիսների ՏԱՑ-երի անկումը խորացել է 0.1 տոկոսային կետով:

ՏԱՑ-ի անկումը առավելապես պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների ոլորտների անկմամբ, որոնց նպաստումները կազմել են


համապատասխանաբար -5.2 և -3.5 տոկոսային կետ: Բացասական է եղել նաև արդյունաբերության և շինարարության ոլորտների նպաստումները՝ կազմելով համապատասխանաբար -0.2 և -0.5 տոկոսային կետ: ՏԱՑ-ին դրական նպաստում ունեցող միակ ճյուղը եղել է գյուղատնտեսությունը, որը գրանցելով 1.4% իրական աճ, ՏԱՑ-ի անկմանը հակազդել է 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության տասներկուամսյա անկման բարձր տեմպը պահպանվել է նաև դեկտեմբերին: Հունիսից մինչև սեպտեմբեր ամիսներին արդյունաբերության ոլորտում տասներկուամսյա անկման տեմպի փոքր լինելու


շնորհիվ (հանքարդյունաբերության աճով պայմանավորված) պահպանվում էր ընդհանուր արդյունաբերության դրական նպաստումը ՏԱՑ-ին: Սակայն, հոկտեմբերից սկսած՝ հատկապես նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, անկումը խորացել է՝ կուտակային աճը փոխարինելով անկմամբ: Արդյունքում, հունվար-դեկտեմբեր ամիսներին արդյունաբերության ոլորտում գրանցվել է 0.9% անկում:

Հունվար-նոյեմբեր ամիսներին¹ հանքարդյունաբերության կուտակային աճի տեմպը կտրուկ նվազել է՝ կազմելով 12.7%՝ հունվար-հոկտեմբերի 14.9% աճի համեմատ և ընդհանուր արդյունաբերության անկմանը հակազդելով 1.7 տոկոսային կետով՝ հունվար-հոկտեմբերի 2.6 տոկոսային կետի փոխարեն: Մշակող արդյունաբերության անկման տեմպը հունվար-նոյեմբերին խորացել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 3.4% և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստելով 1.8 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 0.4% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.04 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 14.4%-ով՝ ունենալով 0.1 տոկոսային կետ բացասական նպաստում:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում վերջին ամիսներին նկատվող փոքր տասներկուամսյա աճը դեկտեմբերին փոխարինվել է կտրուկ անկմամբ: Այսպես, դեկտեմբեր ամսվա շինարարության ծավալները նախորդ տարվա

¹ Հունվար-դեկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

դեկտեմբերի համեմատ կրճատվել են 3.0%-ով: Սակայն, չնայած դրան, հունվար-դեկտեմբեր ամիսներին շինարարության ծավալների նվազման տեմպը դանդաղել է հունվար-նոյեմբերի համեմատ 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 9.5%: Շինարարության անկումը հիմնականում պայմանավորված է եղել բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների անկմամբ:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների կուտակային անկման բարձր տեմպը ավելի է խորացել դեկտեմբեր ամսին: Արցախյան պատերազմում պարտության, կորոնավիրուսի երկրորդ ալիքի, ինչպես նաև քաղաքական անկայունության հետևանքով առաջացել է բարոյահոգեբանական ծանր մթնոլորտ, ինչի հետևանքով ծառայությունների ոլորտի անկումը շարունակաբար խորանում է: 2020թ. դեկտեմբեր ամսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտի անկումը կազմել է 22.6%, ինչի արդյունքում հունվար-դեկտեմբեր ամիսների անկումը հասել է 14.7%-ի:

Հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով², ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ» և «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղերի անկմամբ, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.6, 4.1 և 3.2 տոկոսային կետ: Ծառայությունների ոլորտում դրական դինամիկա են շարունակում դրսևորել միայն «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» և «տեղեկատվություն և կապ» ենթաճյուղերը, որոնց դասվող ծառայությունների ծավալները նույն ժամանակահատվածում աճել


² Հունվար-դեկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

են համապատասխանաբար 7.0% և 7.2%՝ ընդհանուր ոլորտի աճին նպաստելով համապատասխանաբար 1.5 և 0.9 տոկոսային կետով:

Նշենք, որ ծառայությունների ոլորտի նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում հունվարից մինչև սեպտեմբեր ամիսների կուտակային անկման ցուցանիշները վատթարացել են 0.2 տոկոսային կետով, իսկ հունվար-հոկտեմբեր և հունվար-նոյեմբեր ամիսներինը՝ 0.1 տոկոսային կետով:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալների անկման բարձր տեմպերը նույնպես պահպանվել են նաև դեկտեմբերին: Թեև նոյեմբերի համեմատ դեկտեմբերին առևտրի ծավալների անկումը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ 4.6 տոկոսային կետով մեղմվել է, սակայն այն եղել է բավական բարձր՝ -17.4%: Արդյունքում՝ 2020թ. առևտրի ծավալների անկումը նախորդ տարվա համեմատ կազմել է 14.0%:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման ծավալները նոյեմբերին ունեցած կտրուկ անկումից հետո դեկտեմբերին փոքր ինչ վերականգնվել են: Դեկտեմբեր ամսին արտահանման ծավալները նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել են 8.7%-ով, ինչի արդյունքում հունվար-դեկտեմբեր ամիսների արտահանման ծավալների անկման տեմպը 1.3 տոկոսային կետով մեղմվել է՝ կազմելով 3.9%:

Հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով³՝ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «պատրաստի սննդի արտադրանքի» արտահանման 14.9% կրճատմամբ, «թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների» 12.1% կրճատմամբ և «սարքեր և ապարատների» 47.5% կրճատմամբ, որոնք ընդհանուր արտահանման աճին ունեցել են համապատասխանաբար 3.6, 1.9 և 1.8 տոկոսային կետ բացասական նպաստում:


Արտահանման անկմանը հիմնական հակազդող ոլորտը շարունակում է մնալ հանքարդյունաբերությունը, որի արտահանման ծավալները հունվար-նոյեմբեր ամիսներին աճել են 14.1%-ով՝ արտահանման անկմանը հակազդելով 3.9 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում դրական են եղել նաև «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների շարժընթացները, որոնք աճել են համապատասխանաբար 41.7% և 26.7%՝ արտահանման ընդհանուր ծավալներին ունենալով 0.8 և 1.1 տոկոսային կետ դրական նպաստում:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նախորդ ամիսների արտահանման ցուցանիշները (մասնավորապես՝ փետրվար, մայիս, սեպտեմբեր և նոյեմբեր

³ Հունվար-դեկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ամիսների), ինչի արդյունքում հունվար-փետրվարի, և հունվար-հուլիս ամիսների արտահանման կուտակային աճի տեմպը բարելավվել է 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալների անկումը, ի տարբերության արտահանման ծավալներին, խորացել է դեկտեմբերին՝ գրանցելով տարվա վատագույն ցուցանիշը: Դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ներմուծման ծավալները նվազել են 29.6%-ով, իսկ ներմուծման տարեկան անկումը կազմել է 17.7%:

Հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով⁴ ներմուծման նվազման հիմնական գործոնը տրանսպորտի միջոցների ներմուծման ծավալների խոշոր՝ 70.0% անկումն է, ինչը պայմանավորել է ընդհանուր ներմուծման անկման 8.8 տոկոսային կետը: Նշանակալի են եղել նաև «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մանածագործական իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների կրճատումները, որոնք ընդհանուր ներմուծման անկմանը նպաստել են համապատասխանաբար 2.8, 1.3 և 1.2 տոկոսային կետով:

ՀՀ ՎԿ-ի կողմից վերանայվել են նաև նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները (մասնավորապես՝ ապրիլ, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների), ինչի արդյունքում հունվար-մայիս և հունվար-օգոստոս ամիսների ներմուծման աճի ցուցանիշը բարելավվել է 0.1 տոկոսային կետով, իսկ հունվար-նոյեմբեր ամիսների ցուցանիշը՝ նույն չափով վատթարացել:


⁴ Հունվար-դեկտեմբեր ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը կազմել է 3.9%՝ լինելով 1.9 տոկոսային կետով ավելի ցածր նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 5.3 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.0 տոկոսով⁵:

Հունվար-դեկտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 189,758.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 170,265.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 199,031.0 դրամ:




Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-դեկտեմբեր, %



⁵ Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**



2020 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքը շարունակում է արժեզրկվել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, և արժևորվել ՌԴ ռուբլու նկատմամբ: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 1.8%: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույնպես խորացել է և կազմել 3.6%: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը

կազմել է 9.4%: Ստացվում է, որ ՀՀ հիմնական առևտրային գործընկերոջ՝ ՌԴ-ի արժույթի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է՝ վնասելով ՀՀ արտահանման մրցունակությանը, և միևնույն ժամանակ արժեզրկվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչի հետևանքով աճել է և՛ պետական, և՛ մասնավոր հատվածների արտաքին պարտքի մակարդակը:

Դրամի փոխարժեքի արժեզրկման ցուցանիշներն առավել ակնհայտ են ժամանակահատվածի վերջի դրությամբ ուսումնասիրելիս: Այսպես՝ դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքը (դոլարի նկատմամբ) կազմել է 522.6 դրամ՝ նախորդ տարվա օրվա նկատմամբ արժեզրկվելով 8.2%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը նույն ժամանակահատվածում կազմել է 16.2%, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորումը՝ 10.7%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտների անկման տեմպը դանդաղել է վերջին ամիսներին՝ դեկտեմբերին հասնելով բավականին փոքր՝ 0.3%-ի: Պետական բյուջեի եկամուտների անկման փոքր տեմպը պայմանավորված է բյուջեի այլ եկամուտների 37.5% և պաշտոնական դրամաշնորհների ավելի քան չորս անգամ աճով: Բյուջեի այլ եկամուտները տարվա արդյունքներով կազմել են 122.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 88.8 մլրդ դրամի փոխարեն, որոնց կազմում են ներառված նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե փոխանցված գումարները: Պաշտոնական դրամաշնորհները կազմել են 53.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 12.4 մլրդ դրամի փոխարեն: Դրամաշնորհների մեծ աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախորդ տարի դրանք նախատեսվածի չափով չէին ստացվել, մասնավորապես՝ 2019թ. նախատեսված 39.4 մլրդ դրամի փոխարեն ստացվել էր ընդամենը 12.4 մլրդ դրամը:


Պետական բյուջեի հարկային եկամուտները նվազել են, սակայն տնտեսական խոր անկման պայմաններում դրանց տարեկան նվազման տեմպը համեմատաբար մեղմ է: Այսպես՝ տարվա արդյունքներով հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1385.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 5.4%-ով:

Եթե հիմք ընդունենք 2020թ. անվանական ՀՆԱ-ի վերաբերյալ ԱՄՀ կանխատեսումները⁶ (ըստ որոնց անվանական ՀՆԱ-ն 2020թ. կկազմի 6,140 մլրդ

⁶ Republic of Armenia: Third Review under the Stand-By Arrangement and Modification of Performance Criteria-Press Release; Staff Report; Staff Supplement; and Statement by the Alternate Executive Director for the Republic of Armenia, December 16, 2020, IMF Country Report No. 2020/318.

դրամ, իսկ տնտեսական աճը՝ -7.3%), ապա հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 22.6%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.3 տոկոսային կետով: Ճգնաժամային պայմաններում հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճը նշանակում է, որ կառավարությունն իրականացրել է հարկերի գծով զսպող քաղաքականություն, ինչը իհարկե հակասում է հակաճգնաժամային քաղաքականության տրամաբանությանը և առաջացնում է հավելյալ խնդիրներ տնտեսավարող սուբյեկտների համար:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Հունվար-դեկտեմբեր ամիսներին, հարկային եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի (նվազումը՝ 17.9%), մաքսատուրքի (նվազումը՝ 28.3%) և պետական տուրքի (նվազումը՝ 27.1%) գծով մուտքերի անկումներով, որոնց նպաստումը ընդհանուր հարկերի նվազմանը կազմել է համապատասխանաբար 2.2, 1.8 և 0.8 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-նոյեմբեր		Հունվար-դեկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-5.3	-5.3	-5.4	-5.4
ԱԱՀ	-3.2	-1.1	-0.6	-0.2
Շահութահարկ	-16.1	-1.9	-17.9	-2.2
Եկամտային հարկ	1.2	0.3	0.2	0.1
Ակցիզային հարկ	0.4	0.0	-3.1	-0.3

Շրջանառության հարկ	-8.4	-0.2	-8.3	-0.2
Արտոնագրային հարկ	-99.0	-0.3	-98.8	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-7.4	-0.3	-8.9	-0.4
Մաքսատուրք	-29.2	-1.9	-28.3	-1.8
Սոցիալական վճար	31.1	0.4	32.6	0.4
Այլ հարկային եկամուտներ	16.4	0.2	14.8	0.2
Պետական տուրք	-26.6	-0.8	-27.1	-0.8

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճը դանդաղել է դեկտեմբերին՝ պայմանավորված կապիտալ ծախսերի աճի դանդաղմամբ: Հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 16.3%-ով՝ կազմելով 1894.3 մլրդ դրամ: Ծախսերի կուտակային աճի տեմպը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 3.4 տոկոսային կետով:

Ընթացիկ ծախսերի աճը հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 16.1%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 17.6%: Նշենք, որ կապիտալ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Արցախյան պատերազմի հետ կապված ծախսերի աճով, որոնք առավելապես իրականացվել են նոյեմբերին (հունվար-նոյեմբեր ամիսներին կապիտալ ծախսերի աճը կազմել է 75.9%): Իսկ դեկտեմբեր ամսին իրականացվել է ընդամենը 35.9 մլրդ դրամ ծավալով կապիտալ ծախս, ինչը նախորդ տարվա դեկտեմբերի ցուցանիշից պակաս է 57.3%-ով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդը մոտ հինգ անգամ գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: 2020թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին պակասուրդը կազմել է 333.9 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 91.2 մլրդ դրամով: Սակայն այն մնացել է ցածր 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի հիմքում դրված կանխատեսումներով 2020թ. մոտ 430 մլրդ դրամ պակասուրդից: Դա հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ, ինչը իհարկե բացասական կանդրադառնա ինչպես 2020, այնպես էլ հաջորդ տարիների տնտեսական աճի և զարգացման վրա:

5.4. Պետական պարտք

2020թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7968.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճելով 8.8%-ով: Սակայն, միևնույն ժամանակ, փոխարժեքի արժեզրկման հետևանքով, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 18.6%-ով՝ հասնելով 4,164.3 մլրդ դրամի: Կառավարության պարտքը նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 9.9%-ով, իսկ դրամային արտահայտությամբ 19.7%-ով: ԱՄՀ-ի կողմից կանխատեսված 6,140.0 մլրդ դրամ ՀՆԱ-ի ցուցանիշը հիմք ընդունելու պարագայում, պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. վերջի դրությամբ կկազմի 67.8% (աճը 2019թ. նկատմամբ՝ 14.3 տոկոսային կետ), իսկ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 63.9% (աճը 2019թ. նկատմամբ՝ 14.0 տոկոսային կետ):

ՀՀ կառավարության պարտքի աճը հիմնականում տեղի է ունեցել ներքին պարտքի աճի հաշվին, որը աճել է 24.6%-ով, իսկ արտաքին պարտքի աճը կազմել է 5.6%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի 12-ամսյա աճը, %




Հարկ է նշել, որ 2021թ. հենց սկզբին իրականացվել է եվրապարտատոմսերի նոր խմբաքանակի տեղաբաշխում՝ 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով՝ առանց նախկինում թողարկվածների հետգնման: Եթե դա ևս ավելացնենք առկա պետական պարտքի պաշարին, ապա այն կկազմի ավելի քան 8.7 մլրդ ԱՄՆ դոլար կամ 4,556.2 մլրդ ՀՀ դրամ: Վերջինս ԱՄՀ կողմից կանխատեսված ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 74.2%: Եթե նույնիսկ ենթադրենք, որ 2021թ. ընթացքում պարտքի պաշարի ավելացումը միայն այդ 750 մլն ԱՄՆ դոլարի չափով է լինելու, ապա 2021թ. անվանական ՀՆԱ-ի նկատմամբ, որը ԱՄՀ-ի կողմից կանխատեսվել է 6,344 մլրդ դրամի չափ (հղումը տես վերևում), պարտքը կկազմի 71.2%: Այսինքն՝ ՀՀ պետական պարտքը արդեն իսկ գերազանցել է միջազգային գրեթե բոլոր վերլուծություններում զարգացող երկրների համար ռիսկային համարվող 60% շեմը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությամբ կառավարության պարտքի սահմանային շեմ է համարվում ՀՆԱ-ի 60%-ը: Սա, իհարկե, կունենա մի շարք բացասական հետևանքներ: Այդ թվում, տեղի կունենա ներդրողների կողմից ՀՀ տնտեսության նկատմամբ վստահության անկում, խիստ կնվազի հարկաբյուջետային քաղաքականության հնարավորությունները տնտեսական իրավիճակին արձագանքելու տեսանկյունից, իսկ պետական ծախսերի կառուցվածքում կաճեն տոկոսավճարները՝ նվազեցնելով սոցիալական, կրթական, առողջապահական և այլ կարևոր ծրագրերի համար անհրաժեշտ ռեսուրսները:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Դեկտեմբերին գրանցվել է 12-ամսյա գնաճի կտրուկ արագացում: 12-ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է 3.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.8 տոկոսային կետով:


Դեկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը կտրուկ՝ 1.0 տոկոսային կետով բարձրացրել էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ իրականացնելով զսպող քաղաքականություն: Հարկ է նշել, որ գնաճի արագացումը հիմնականում պայմանավորված է առաջարկի գործոններով, հետևաբար ԿԲ-ի կողմից տոկոսադրույքի բարձրացումը առավելապես միտված է գնաճային սպասումների խարսխմանը: Հատկանշական է, որ ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվությունում⁷, որը հրապարակվել է 2020թ. դեկտեմբերի 29-ին, 12 ամսյա գնաճի կանխատեսումը 2020թ. վերջի համար կազմում է 2.5%, ինչը նշանակում է, որ գնաճի այսքան բարձր ցուցանիշ չէր կանխատեսվել նույնիսկ ԿԲ-ի կողմից: Նույն հաշվետվությունում, 2021թ. համար տարեվերջյան տասներկուամսյա գնաճը կանխատեսվել է 4.4%, հետևաբար կարելի է սպասել գների հետագա աճ նաև 2021 թվականին:

⁷ Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր IV եռամսյակ 2020թ. Դրամավարկային քաղաքականության 2020թ. III եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն)

https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/DVQ/Monetary%20overview_IV_2020.pdf


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. դեկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը շարունակել է նվազել: Այս միտումը սկսվել էր հոկտեմբերից՝ պայմանավորված լինելով պատերազմով, դրա բացասական արդյունքներով, ինչպես նաև քաղաքական անկայունությամբ: Դեկտեմբերին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճել է ընդամենը 3.9%-ով, որը նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ փոքր է 1.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը կրճատվել է 1.2%-ով՝ ընդհանուր ավանդների աճին հակադրելով 0.4 տոկոսային կետով:


Ավանդների աճի կառուցվածքում, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է տնային տնտեսությունների ավանդների նպաստման չափը, որը 6.6 տոկոսային կետից դարձել է 0.1: Սակայն փոքր աճ է ունեցել ձեռնարկություններից ներգրավվող ավանդների ծավալների նպաստումը՝ 0.8-ից դառնալով 1.8 տոկոսային կետ, ինչը խոսում է այն մասին, որ կազմակերպությունները հետաձգում են ներդրումային գործունեությունը և նախընտրում են ազատ դրամական միջոցները պարզապես պահել բանկերում՝ որպես ավանդ:

Վարկերի աճի տեմպի դանդաղումը շարունակվել է նաև դեկտեմբերին: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 14.6 տոկոսով: Վարկերի աճի տեմպի անկումը տարեվերջին պայմանավորված է ինչպես տնտեսական իրավիճակով և անորոշությունների առկայությամբ, այնպես էլ կառավարության տնտեսական օժանդակության ծրագրերի (մասնավորապես՝ համավարկավորման և տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի) ավարտով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 19. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի աճին հիմնականում նպաստել են արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերը, հիպոթեքային վարկերը և ծառայությունների ոլորտի վարկերը՝ համապատասխանաբար 4.4, 3.5 և 2.8 տոկոսային կետ նպաստումներով: Սպառողական վարկերի նպաստումը նախորդ տարվա համեմատ էականորեն նվազել է՝ 7.3 տոկոսային կետից հասնելով 0.4-ի, ինչը պայմանավորված է մի կողմից՝ տնտեսությունում պահանջարկի նվազմամբ, մյուս կողմից՝ տրանսպորտային միջոցների ներկրման դանդաղմամբ (այս գործոնով էր նաև պայմանավորված նախորդ տարվա ընթացքում սպառողական վարկերի բարձր աճը):

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կորոնավիրուսի տարածման երկրորդ ալիքը, որը ՀՀ-ում բավական ծանր անցավ, կարծես թե մոտեցել է իր ավարտին: 2020թ. դեկտեմբերի ընթացքում նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը կազմել է 766 դեպք՝ նոյեմբերի 1510-ի համեմատ, իսկ 2021թ. հունվարին այդ ցուցանիշը շարունակել է նվազել՝ հասնելով 294-ի: Մահվան դեպքերի միջին օրական ցուցանիշը նույնպես նվազել է՝ դեկտեմբերին կազմելով 21, իսկ հունվարին՝ 9 դեպք: Արդյունքում՝ հունվարի 29-ի դրությամբ ընդհանուր գրանցված դեպքերը կազմում են ավելի քան 166 հազար, իսկ մահվան դեպքերը՝ 3069-ը:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը զբաղեցնում է աշխարհում 23-րդ տեղը՝ նախորդ ամսվա 11-րդ տեղի փոխարեն, իսկ մահվան դեպքերի թվով՝ 29-րդը՝ նախորդ ամսվա 19-րդ տեղի փոխարեն:

Գծապատկեր 20. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. հունվարի 29-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Ամփոփելով կարող ենք նշել, որ 2020 թվականը Հայաստանի համար կարելի է համարել իրապես աղետալի՝ ինչպես տեղի ունեցած շուկերի քանակի, այնպես էլ դրանց հետևանքների տեսանկյունից:** Կորոնավիրուսի երկու ալիքները, կառավարության հակաճգնաժամային ծրագրերի մեծ մասի ձախողումը, Արցախյան պատերազմը, դրա բացասական արդյունքը և քաղաքական անկայունությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում առաջացրել են խոր անկում, որի տեսանելի հետևանքը 7.5% տնտեսական ակտիվության անկման ցուցանիշն է: Միաժամանակ, շուկերի զգալի մասը (Արցախյան պատերազմի բացասական հետևանքները, կորոնավիրուսի առկայությունը և քաղաքական անկայունությունը) չեն ավարտվել 2020թ. ավարտով: Ավելին, դրանց առաջացրած անորոշությունները և վատատեսական սպասումները ավելի են նվազեցնում տնտեսության վերականգնման հնարավորությունները 2021 թվականին և հետագա տարիներին: Բացակայում են նաև կառավարության կողմից դրական ազդակները տնտեսական քաղաքականության կամ սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված որևէ միջոցառման վերաբերյալ: Հետևաբար, մեծ վտանգ կա, որ տնտեսական անկման ուղղությունը կպահպանվի նաև 2021 թվականին:

2. **Կառավարության կողմից արվող քայլերը լուրջ վտանգի տակ են դրել պետական ֆինանսների կայունությունը:** Մեր կողմից հրապարակվող ամսական վերլուծություններում, ինչպես նաև մի շարք տնտեսագետների կողմից պարբերաբար մատնանշվում են հարկաբյուջետային հատվածի առկա խնդիրների

մասին, որոնց թվում են կապիտալ ծախսերի թերակատարումը, պարտքի հաշվին ընթացիկ ծախսերի իրականացումը և այլն: Այդ սխալների արդյունքում, արդեն իսկ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն անցել է զարգացող երկրների համար ռիսկային համարվող 60% շեմը, ինչը նշանակում է, որ պետական պարտքի կայունությունը վտանգված է: Դրա հետագա աճը կարող է բերել երկրի անվճարունակության իրավիճակի, որը Հայաստանի ներկա ծանր պայմաններում կունենա կործանարար հետևանքներ: Իրավիճակի կարգավորման, տնտեսական պոտենցիալի վերականգնման և պետական պարտքի՝ մինչև կայուն մակարդակ նվազեցման համար անհրաժեշտ է հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացում և միաժամանակ կապիտալ ծախսերի ավելացում, որը պետք է ուղեկցվի «ոչ պոպուլյար» քայլերի իրականացմամբ, մասնավորապես՝ ընթացիկ ծախսերի կրճատմամբ (ինչը կարող է ներառել նաև աշխատավարձերի և սոցիալական ծախսերի վերանայումներ): Ակնհայտ է, որ ներկայումս դա տեղի չի ունենում՝ խորացնելով վտանգի աստիճանը: Ավելին, կառավարությունը շարունակում է, առանց կարգաբերելու նախկինում ստանձնած ընթացիկ ծախսերի գծով պարտավորությունները, լրացուցիչ նոր պարտավորություններ ստանձնել:

3. Ֆինանսական համակարգի կայունության վտանգները նույնպես առարկայանում են: Առկա անորոշությունների և վատատեսական սպասումների պայմաններում նվազում է ավանդների ծավալների աճի տեմպը՝ հատկապես ոչ ռեզիդենտներից ներգրավված: Դա նշանակում է, որ գումարները դուրս են հանվում ՀՀ-ից՝ առաջացնելով խնդիրներ ֆինանսական համակարգի համար: Բացի այդ, բանկերը սկսել են դրսևորել ավելի քիչ ռիսկային վարքագիծ՝ խստացնելով վարկավորման պայմանները և բարձրացնելով տոկոսադրույքները: Դա կհանգեցնի նրան, որ մի կողմից՝ վարկառուները կդժվարանան վերաֆինանսավորել իրենց վարկերը, և կաճեն չաշխատող վարկերի ծավալները, մյուս կողմից՝ տնտեսություն մուտք գործող ֆինանսական միջոցները կնվազեն՝ հանգեցնելով ամբողջական պահանջարկի նվազմանը և տնտեսական անկման խորացմանը: Տնտեսական անկումը իր հերթին կստեղծի հավելյալ խնդիրներ ֆինանսական համակարգի համար՝ արագացնելով ավանդների նվազումը և մեծացնելով չաշխատող վարկերի ծավալը: Այս շղթան հնարավոր կլինի կանգնեցնել հստակ և լավ մշակված տնտեսական քաղաքականության մեխանիզմների կիրառմամբ, որոնց առկայության կամ մշակման վերաբերյալ, սակայն, չկա որևէ տեղեկատվություն:

4. Կորոնավիրուսի երկրորդ ալիքը տեղի ունեցավ զգալիորեն ավելի մեծ ծավալներով և ցավալի կորուստներով: Սակայն, կարծես թե երկրորդ ալիքը մոտենում է ավարտին, քանի որ ինչպես հիվանդության նոր հաստատված, այնպես էլ մահվան օրական միջին դեպքերը նվազել են 2021թ. հունվարին: Սակայն, հաշվի առնելով այն, որ հակահամաճարակային կանոնները (անհատական պաշտպանության միջոցների կիրառումը) բնակչության կողմից հիմնականում չեն պահպանվում, իսկ կառավարությունը չի վերահսկում դրանց պահպանումը, մեծ է

վտանգը, որ տեղի կունենա նաև երրորդ ակիքը: Դրան սակայն, կառավարությունը պատրաստ չէ, քանի որ 2021թ. պետական բյուջեով որևէ նոր միջոցառում չի նախատեսվել հնարավոր երրորդ ակիքի առաջացման պարագայում: Դա նշանակում է, որ հիվանդության նոր բռնկումը կհանդիսանա նոր շուկ Հայաստանի համար՝ իր տնտեսական, սոցիալական և ֆինանսական խոր հետևանքներով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: